
ԼԵԶՎԻ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽՂԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵՔՍՏՈՒՄ

ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՑԱՆ

Լեզվի և մտածողության փոխհարաբերության խնդիրը մշտապես արժարժվել է փիլիսոփաների, հոգեբանների, լեզվաբանների, գրականագետների, մշակութաբանների աշխատություններում: Հայտնի է, որ լեզվի և լեզվակիրատության (խոսքի) վերաբերյալ տեսակետները խարսխվում են փիլիսոփայական որևէ հայեցակարգի վրա:

Լեզվամտածողության խնդիրների ուսումնասիրությունը մանավանդ վերջին տասնամյակներում առաջ է ընթանում մեծ քայլերով՝ տպավորիչ բացահայտումներ կատարելով լեզվի՝ մարդու կյանքում ունեցած դերի առումով: Շատ տպավորիչ են լեզվի իրացման ոլորտին՝ տեքստի տիրույթին, վերաբերող վերջին ուսումնասիրությունները: Կիրառվում և կարևորվում է հերմենևտիկական մեթոդը հատկապես այն դեպքերում, երբ հարկ է լինում շոշափելու լեզվի, անհատի և իրականության փոխհարաբերության խնդիրը: 19-րդ դարի երկրորդ կեսի լեզվաբանությունն անհնար է պատկերացնել առանց լեզվին և մտածողությանը նվիրված այնպիսի աշխատությունների, ինչպիսին է, օրինակ, Ա. Ա. Պոտեբնյայի «Միտքը և լեզուն» ուսումնասիրությունը, վերջինիս հարող՝ «Բանաստեղծական և արձակային մտածողության հոգեբանությունը» հոդվածը:

Ա. Ա. Պոտեբնյայի այս աշխատություններն ընդգծեցինք հատկապես այն պատճառով, որ դրանցում լեզվաբանությունը և գրականագիտությունը զուգադրելու հնարավորություն է ստեղծվում: 20-րդ դարում այս միտումը ավելի է խորանում այն բանի շնորհիվ, որ որպես լեզվական իրողություն ուսումնասիրվում են հատկապես լեզվի տեքստային ձևն ու բովանդակությունն իրենց տարբեր կողմերով՝ կառուցվածքային, մշակութաբանական, լեզվաբանական, փիլիսոփայական, մինչևիսկ իռացիոնալ և այլն: Մտածողության վրա լեզվի կառուցվածքի ազդեցությունից մինչև անհատի մտածողության և հանրային պայմանավորվածությամբ ձեռք բերված լեզվական նշանների համակարգի հարաբերությունը, խոսքի մեկնաբանման տարբերակայնությունից մինչև որպես էթնոմշակութային գիտակցություն ընկալվող տեքստը դառնում են 20-21-րդ դարերի լեզվաբանական (և ոչ միայն) գիտության ուսումնասիրության նպատակ և օբյեկտ: Հետաքրքրական են այն աշխատանքները, որոնք գրական տեքստի **լեզվագիտական ուսումնասիրությունից**

տրամաբանորեն հանգում են նաև **գրականագիտական-մշակութաբանական խնդիրների արծարծման և, ինչո՞ւ ոչ, լուծման**, քանի որ գրական ստեղծագործության մեջ արծարծվող մտքերը (բովանդակային կողմ) միշտ էլ որոնում են համապատասխան և հարմար լեզվական հենք (ձևային կողմ): Լեզվաբանության և գրականագիտության փոխներթափանցումները ոչ թե պետք է վախեցնեն այդ գիտություններից որևէ մեկով զբաղվողին՝ առաջացնելով այսպես ասած «մասնագիտական խանդ», այլ ստիպեն բացահայտել տեքստը (խոսքը) որպես լեզվի (միջոցի) և մտածողության (ձևի) «հանդիպման վայր»: Ցավոք, մեզանում դեռևս շատ քիչ են լեզվամտածողությանը նվիրված ուսումնասիրությունները, մինչդեռ արտասահմանյան ժառանգությունն այս առումով հատկապես վերջին տասնամյակներին բազմազան է և նույնիսկ, կարելի է ասել, սովորաձավալ:

Գենային լեզվաբանությունը, որը համաշխարհային լեզվաբանության մեջ արմատավորվեց 20-րդ դարի կեսերից ամերիկացի Ա. Ն. Խոմսկու հիմնադրմամբ, պաշտպանում է այն գաղափարը, որ մարդու լեզվական ունակության հիմքում ի ծնե առկա բաղադրիչն է:

Ընդունված է ասել, որ մարդը մտածում է լեզվով: Թվում է, թե մտածելն ու խոսելը, մտածողությունն ու լեզուն առանձին գոյություն ունեցող երևույթներ են, և ցանկացած պահի հնարավոր է դրանք տարանջատել: Սակայն դա այդպես չէ. մտածողությունն ու լեզուն հանդես են գալիս համատեղ, և գործնականում ու քնականորեն անհնար է գատորոշել, թե ինչ է լեզուն որպես առանձին երևույթ, և ինչ է մտածողությունը որպես մեկ այլ երևույթ: Կարելի է տեսական-փիլիսոփայական ձևակերպումներ տալ և՛ մտածողությանը, և՛ լեզվին առանձին-առանձին, բայց ակնհայտ է, որ յուրաքանչյուր այդպիսի ձևակերպման հեղինակն ինքը անպայմանորեն պատկանում է որևէ որոշակի լեզվաշխարհի և խոսում է որևէ որոշակի լեզվով: Այն հանգամանքը, որ տեքստը (խոսքը) միշտ լեզվական որոշակի, մասնավոր դրսևորում ունի, իսկ մտածողությունն ընկալվում է որպես ուղեղի գործունեություն ընդհանրապես, ցույց է տալիս, որ այդ դեպքում խոսվում է տարբեր (մասնավոր և ընդհանուր) «հարթություններում» գոյություն ունեցող երևույթների մասին, ինչը, մեր համոզմամբ, թույլատրելի չէ: Կարելի է, կոնկրետ լեզվի մասին խոսելով, դատողություններ անել կոնկրետ մտածողության մասին, սակայն կարծում ենք դժվար է, կոնկրետ լեզվի վրա հիմնվելով, վերջնական եզրահանգումներ անել ընդհանրապես մտածողության մասին: Մյուս կողմից, մտածողության մասին դատողություններ անելու համար ստիպված ես օգտագործել կոնկրետ լեզու կամ լեզուներ: Ֆրանսերենով չես կարող ճիշտ դատողություններ անել մտածողության մասին ընդհանրապես. սխալվելու հավանականությունը մեծանում է: Ինչո՞ւ մարդիկ չեն հասկանում միմյանց. որովհետև, ինչպես ասում են, «մենք տարբեր լեզուներով ենք խոսում»:

միմյանց չեն հասկանում նաև այն պատճառով, որ նրանք, իրոք, տարբեր լեզուներով են խոսում, թեև, ըստ էության, երկու դեպքում էլ խոսքը նույն բանի մասին է: Մարդիկ հաճախ միմյանց չեն հասկանում, որովհետև և՛ մտածողական, և՛ լեզվակիրառական առումով տարբեր են: Սա, իհարկե, չի ենթադրում, որ նույն լեզվով խոսողներն անպայման միմյանց հասկանալու են:

«Մենք տարբեր լեզուներով ենք խոսում» ասող մարդիկ նկատի ունեն մտածելը: Խոսելն ու մտածելը լեզվական այս դրսևորման մեջ միևնույն երևույթներն են. խոսելը հասկացվում է մտածել: Մարդը կարող է նախ մտածել մի լեզվով, հետո մտածածը ասել մեկ ուրիշով, բայց չի կարող նույն պահին խոսել, օրինակ, գերմաներեն, բայց մտածել անգլերեն: Սա մեկ անգամ ևս վկայում է, որ կոնկրետ մտածողությունն ու կոնկրետ լեզուն համատեղ են:

Ֆ. Գ. Յունգերը լեզվի և մտածողության փոխհարաբերության խնդիրը քննելիս առաջ է քաշում հետևյալ տեսակետը. «Լեզուն առանց գիտության կարելի է պատկերացնել, գիտությունը հնարավոր չէ պատկերացնել առանց լեզվի: Իսկ քանի որ լեզուն ինչ-որ որոշակի լեզու է, ուրեմն գիտությունն անհնար է պատկերացնել առանց որևէ որոշակի լեզվի: Եթե լեզուների բազմազանությունից դժգոհ՝ մեր մեջ ծնվում է լեզուները մեկ-միակ՝ ինչ-որ *lingua universalis*-ով կամ համաշխարհային լեզվով փոխարինելու պլան, նման դեպքում նույնպես այդ լեզուն ինչ-որ որոշակի լեզու է, այնպիսի կառուցվածքի լեզու, որը հենվում է բնական լեզուների վրա»¹:

Հնարավոր չէ խոսել և չմտածել: Իսկ եթե մտածում ես, ուրեմն խոսում ես, քանի որ մտածելը հենց խոսելն է: Մտածում ես խոսելով և խոսում ես մտածելով, թեև հնարավոր է՝ սխալ մտածես. չկա առանձին լեզու, և չկա առանձին մտածողություն: Թերևս նաև այս սկզբունքի դիրքերից նայելիս է, որ ընդունելի է դառնում 20-րդ դարի 30-ական թվականներից հայտնի Մեյի-Ուորֆի վարկածը², որի համաձայն՝ լեզվի կառույցն է որոշում մտածողությունը և դառնում իրականությունը ճանաչելու միջոց: Այս տրամաբանությամբ՝ տարբեր լեզուներով խոսող մարդիկ տարբեր կերպ են ընկալում աշխարհն ու տարբեր կերպ էլ մտածում: Նմանօրինակ գաղափար արտահայտել է դեռ Վ. Հումբոլդտը, որը լեզվի ուսումնասիրությունը պատկերացնում է մարդու գիտակցության և մտածողության, նրա մշակույթի և հոգևոր կյանքի հետ սերտ կապի մեջ, ուր ընդգծվում է լեզվի և ազգային բնավորության փոխկապակցվածությունը: Նա հանգում է այն տեսակետին, որ եթե լեզուն առկա է մտքի ծագման գործընթացում, ապա միտքը չի կարող ինչ-որ կերպ չհարմարվել կոնկրետ լեզվական արտահայտության ձևին: Ըստ Հումբոլդտի՝ լեզուն ժողովրդի էներգիան է, որ բխում է նրա

¹ <http://gtmarket.ru/laboratory/basis/3157/3159>

² Տե՛ս http://ru.wikipedia.org/wiki/Гипотеза_Сепира_—_Уорфа

խորքերից, այն մարդկային հոգու կենդանի գործունեությունն է, «լեզուն ժողովրդի հոգին է, իսկ ժողովրդի հոգին հենց նրա լեզուն է»³:

Բացի այդ՝ լեզուների կառուցվածքների տարբերությունները և մարդկության հոգևոր զարգացման վրա դրանց ազդեցությունները քննելիս Վ. Հումբոլդտը զարգացնում է այն գաղափարը, որ «յուրաքանչյուր լեզու, նշելով երևույթները և արտաքին աշխարհի առարկաները, իրենով խոսող ժողովրդի համար ձևավորում է աշխարհի սեփական պատկերը», «այդ պատճառով էլ տարբեր լեզուներ տարբեր աշխարհընկալումներ են»⁴: Նա նույն գաղափարը այլ բանաձևմամբ էլ է կրկնում. «...Մարդկային ցեղի լեզուների կառուցվածքը տարբեր է, որովհետև տարբեր են ժողովուրդների հոգևոր առանձնահատկությունները»⁵: Իսկ «սահմանազատող պահն այստեղ այն է, որ մի ժողովուրդ լեզվի մեջ ներդնում է ավելի օբյեկտիվ իրողություններ, իսկ մյուսը՝ ավելի սուբյեկտիվ տարրեր»⁶: Թեև Հումբոլդտը զարգացնում է այն գաղափարը, որ տարբեր լեզուներով ձևավորվող մտքերը չեն կարող լիովին նույնը լինել (որովհետև լեզուները միշտ իրենց հատուկ ձևերի միջոցով են դրսևորվում), սակայն նա այն տեսակետին չէ, թե տարբեր լեզուներով խոսող մարդիկ չեն կարող հասկանալ միմյանց ընդհանրապես. թարգմանել միշտ էլ հնարավոր է, բայց ինչպես կոնկրետ ազգային լեզվի մեջ անհատի լեզվական առանձնահատկություններն են «վերանում», այնպես էլ ազգային լեզուների առանձնահատկություններն են «վերանում մարդկության սուբյեկտիվությամբ»: Այնուամենայնիվ, հումբոլդտյան այս համակարգն է թերևս բանաստեղծին դրդում ասելու.

Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին⁷:

Մտածողության առանձնահատկությունը կոնկրետ լեզվի առանձնահատկություններով պայմանավորելուն միտված հայեցակարգերի ընդդիմախոսները պնդում են, որ, օրինակ, մասնավորապես ժամանակի, տարածության կարևորագույն ընկալումները տարբեր լեզուներով խոսող մարդկանց մտածողության մեջ նույնն են, ուրեմն և սեպիրտուրֆյան վարկածը չի կարող ճիշտ լինել: Խոսքն այն մասին է, որ մարդիկ ինչ լեզուներով էլ խոսելիս լինեն, նրանց համար կոնկրետ, ասենք, երկու հազար յոթ հարյուր քսանչորս մետր հիսունվեց սանտիմետր ե-

³ Гумбольдт В. О различии строения человеческих языков и его влиянии на духовное развитие человеческого рода (извлечения) // Звегинцев В. А. История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях. Часть I. М., 1960, էջ 85-105, նաև՝ http://destruction.narod.ru/gumboldt_ctrojnye_jasykov.htm

⁴ <http://rujaz.narod.ru/szuszarina/OFIstfil.pdf>

⁵ Гумбольдт В., նշվ. աշխ., էջ 85-105:

⁶ Նույն տեղում:

⁷ Վ. Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 240:

րեսուններեք միլիմետր տարածությունը բացարձակապես նույնն է: Պարզ է, որ հիշյալ տարածությունը աշխարհագրորեն նույնն է ամենուրեք և բոլորի համար, սակայն, մեր խորին համոզմամբ, նույնը չէ հոգեբանական ընկալման առումով: Մինչևիսկ ժամանակի և տարածության ընկալումները տարբեր լեզուներով և, շեշտենք, տարբեր աշխարհագրական միջավայրում ապրող և խոսող մարդկանց հոգեկան աշխարհում տարբեր են: Օրինակ՝ ռուսական լայնարձակ դաշտավայրում ապրող և այդ դաշտավայրով երթևեկել պատրաստվող վարորդի համար երկու հարյուր կիլոմետր ճանապարհն այնքան էլ հսկա տարածություն չէ, որքան, ասենք, լեռնային շրջաններում ապրող և լեռնային ոլորաններով նույնքան տարածություն անցնել պատրաստվող վարորդի համար: Առաջին վարորդի հոգեկանում տվյալ տարածությունը անցնելու համար ժամանակային (ինչը պարտադրում է նաև հոգեբանական) առումով այլ նախապատրաստություն է իրականանում, երկրորդ վարորդի հոգեկանում՝ այլ. առաջինն իր կյանքից այդ ճամփորդությանը հատկացնելու է մինչև երկու ժամ, իսկ երկրորդը՝ երեք ժամից ավելի: Ու քանի որ լեզուն և՛ հոգեբանություն է, և՛ մտածողություն, ուրեմն տարբեր լեզուներով խոսող, տարբեր աշխարհագրական, բնակլիմայական պայմաններում ապրող մարդկանց համար հիշյալ տարածությունը հոգեբանորեն այնքան էլ նույնը չէ, և լեզվամտածողության խնդիրներին այս կամ այն կերպ անդրադառնալիս անհնար է անտեսել և մերժել հումբոլդտյան ու սեպիր-ուորֆյան հայեցակարգերը: Խնդիրը բարդանում է նաև այն հանգամանքով, որ նույն լեզվով կարող են խոսել աշխարհագրական և բնակլիմայական տարբեր միջավայրերում ապրող մարդիկ, հանրության տարբեր խմբեր, ուրեմն և հնարավոր է, որ տարածության, ժամանակի, երևույթների, առարկաների, զգացում-զգացմունքների տարբեր ընկալումներ ի հայտ գան նույն լեզվական տիրույթում, եթե այդ նույն լեզուն կրող հանրության կամ ժողովրդի առանձին հատվածներ ապրում են էականորեն իրարից տարբերվող աշխարհագրական և բնակլիմայական առանձին պայմաններում: Այնպես որ, և՛ տարբեր լեզուներով, և՛ նույն լեզվով խոսող մարդկանց, մարդկանց խմբերի մտածողության մեջ կարող են լինել և՛ տարբերություններ, և՛ նմանություններ ու համընկնումներ, ինչպես որ և՛ տարբեր լեզուներով, և՛ նույն լեզվով խոսող մարդկանց մտածողության մեջ կարող են լինել և՛ տարբերություններ, և՛ նմանություններ ու համընկնումներ:

Եվ ճիշտ չէ մտածողության տարբերությունները պայմանավորել հենց միայն լեզվի գործոնով. դրանք կարող են բխել ժողովրդի պատմական ճակատագրից, ապրած աշխարհագրական միջավայրից, հարևաններից և այլն, բայց որ այդ ամենն ի վերջո ժողովրդի լեզվի մեջ է արտացոլվում, անհերքելի է: Ավելին, կարծում ենք՝ ժամանակի ընթացքում հենց կոնկրետ լեզուն կոնկրետ միջավայրում դառնում է կոնկրետ մտա-

ծողությունն պայմանավորող աստղ՝ իր կարևորությամբ ժամանակի ընթացքում վերածվելով առաջնային, ինքնություն գործոնի:

Մշակույթները որքան նման, նույնքան էլ տարբեր են, ուրեմն և գիտության մեջ հայտնի տեսակետը, թե մտածողությունը, կոնկրետ միտքը չեն կարող կախված չլինել կոնկրետ լեզվից, կոնկրետ լեզվական դրսևորումից, կոնկրետ այլ հանգամանքներից, արժանի է պատշաճ ուշադրության: Իսկ այն, որ յուրաքանչյուր առանձին լեզու իր ձևերով՝ կառուցվածքային առանձնահատկություններով է վերացարկում աշխարհը, ստիպում է մտածել, որ տարբեր լեզուներով խոսողները թեև միմյանց հասկանալ կարող են, սակայն նրանց արտահայտած նույն մտքերը, այնուամենայնիվ, տարբերվում են: Օրինակ՝ **գլխարկ** հասկացությամբ հայը մի բան է պատկերացնում, իսկ, ասենք, ֆրանսիացին, անգլիացին, ռուսը կամ իտալացին՝ այլ բան, առավել ևս՝ հյուսիսի մերձբևեռային խստաշունչ տարածքներում ապրող ժողովուրդները, թեև նրանց համար նույնպես գլխարկը գլխին դնելու (արկանելու), գլուխը պաշտպանելու ինչ-որ բան է: Այնպես որ, Հումբոլդտի լեզվափոխակերպության այս հատվածը պաշտպանում է կոնկրետ լեզվով կոնկրետ լեզվամտածողության գոյության, կոնկրետ լեզվամտածողության հենքի վրա կոնկրետ արժեհամակարգի խարսխված լինելու գաղափարը:

Թերևս ճիշտ կլինի ասել, որ գոյություն ունի սուկ **լեզվամտածողություն**, և վատ չէր լինի, եթե կարողանայինք խուսափել նաև այդ եզրույթից, քանի որ այն առաջացել է ուսումնասիրվող մեկ ամբողջական երևույթի տարրալուծման հետևանքով: Կարելի է ընտրել դրանցից մեկնումեկը և հասկանալ ողջ երևույթը:

Այս դատողությունները կարող են հրահրել նաև մեկ ուրիշ հարց. եթե լեզուն և մտածողությունը առանձին չեն, ապա ինչպես է, որ գոյություն ունեն տարբեր լեզուներ:

Լեզուները միևնույն երևույթի տարբեր դրսևորումներն են, ձևերը: Այսինքն՝ հայերենը մտածողության ձև է, ասել է թե՛ **լեզվամտածողություն անվանվածը միայն կոնկրետ լեզվի դրսևորում է**: Կա, եթե, իհա ըկե, կարելի է հետևյալ կերպ ձևակերպել, այսինչ լեզվով մտածողություն: Չկա ընդհանրապես լեզվամտածողություն, կա, ասենք, հայերեն (կամ հայերենի) լեզվամտածողություն, անգլերեն (կամ անգլերենի) լեզվամտածողություն, գերմաներեն (կամ գերմաներենի) լեզվամտածողություն, չինարեն (կամ չինարենի) լեզվամտածողություն, ճապոներեն (կամ ճապոներենի) լեզվամտածողություն և այլն: Այլ կերպ՝ **լեզվամտածողություն** եզրույթը կարելի է փոխել, ասենք, **հայերեն մտածողություն**, **իսպաներեն մտածողություն**, **արաբերեն մտածողություն** և այլ եզրույթներով: Եթե ընդունում ենք, որ լեզվից (բառիս ամենալայն իմաստով) դուրս մտածողություն գոյություն չունի, ապա պետք է եզրակացնել, որ **մտածողությունը կա միայն ու միայն որպես լեզվամտածո-**

ղություն՝ կոնկրետ լեզվի տիրույթում: Թյուրքնկալման կարող է հանգեցնել այն, որ լեզուն համարվում է մտածածը արտահայտելու միջոց և ոչ թե մտածելու կարողություն: Սակայն մտածելու կարողությունը թաքնված է լեզվի մեջ, նրա խորքերում և ոչ թե ուղեղում: Ինչ-որ կերպ մենության մեջ հայտնված նորածինը, որ սովորականի պես ծնվել է ուղեղով, կարող է մտածել, եթե այդպես էլ նրա հետ ոչ ոք չսկսի պարբերաբար խոսել: Փորձենք այս հարցը քննել աստվածաշնչյան՝ մարդու ծագման վերաբերյալ տեքստային հատվածի օգնությամբ: Կարևոր է նշել, որ մեր վերլուծությունը ոչ թե աստվածաբանական է, այլ, պարզապես, քննություն է քաղաքակրթության պատմության ընթացքում ստեղծված պատկառագրու տեքստի մի այնպիսի հատվածի, որը պատմում է մարդու, մարդկության, հետևաբար՝ լեզվի, խոսքի և մտածողության առաջացման մասին: Մենք տրամաբանության առումով քննում ենք աստվածաշնչյան տեքստը և ոչ թե պատմությունը: Ուրեմն՝ մեզ այս պահին առաջնորդում է ոչ թե պատմական իրադարձություններն ըստ «Աստվածաշնչի» ներկայացնելու մղումը (թեև ասացինք, որ տեքստը այս նպատակի համար նույնպես կարող է ծառայել), այլ այն, թե ինչ է տրամաբանվում տվյալ տեքստից կամ տեքստային հատվածից:

Աստվածաշնչյան տեքստը պատմում է, որ առաջին մարդը՝ Ադամը, երբ դեռ մենակ էր, ու Երկրի վրա ուրիշ մարդ չկար, արդեն մտածում էր ու տխրում: Հարկավ, մտածելու ու տխրելու համար մարդը պետք է որ արդեն մտածելու կարողություն և առիթ ունենար:

Լեզուն հասարակական երևույթ լինելուց առաջ անհատի («քանի որ մարդկային հոգին է լեզվի օրորոցը, հայրենիքն ու տունը»⁸), ինչպես նաև տվյալ լեզվով խոսող հանրության ինքնադրսևորման անհրաժեշտ նախապայման է: Վ. Հումբոլդտի կարծիքով՝ լեզուն առաջանում է մարդկության ներքին պահանջի շնորհիվ, այն միայն արտաքին՝ հասարակական փոխհարաբերությունները պահպանելու կարիքից չէ, որ ստեղծվում է: Լեզուն անհատի, ժողովրդի «ոգու ուժերի» զարգացման համար անհրաժեշտ պայման է: Աստվածաշնչյան այն տեղեկությունը, որ Ադամը, լինելով միայնակ, տխրում էր և ուզում էր հաղորդակցվել, որքան էլ տարօրինակ է, հիշյալ երկու մոտեցումների ճշմարտացիության հավաստումն է: Ճիշտ է, որ լեզուն հասարակական երևույթ է, այսինքն՝ լեզուն կարող է գոյություն ունենալ միայն մարդկային հասարակության առկայության պայմաններում, և Եվայի ի հայտ գալը, փաստորեն, այդ հասարակության ստեղծման սկիզբն է նախանշում: Սակայն տեքստում ներկայացվող հանգամանքը, թե Ադամը, այնուամենայնիվ, նախքան Եվայի (հասարակության) ի հայտ գալն էր մտածում ընկեր ունենալու մասին, խորհրդանշորեն հավաստում է այն, ինչ ա-

⁸ Гумбольдт В. О влиянии различного характера языков на литературу и духовное развитие. Избранные труды по языкознанию. М., 1984, էջ 324-326 և http://sprach-insel.com/index.php?option=com_content&task=view&id=69&Itemid=61

սում է Հումբոլդտը. լեզուն առաջանում է «մարդկության ներքին պահանջի հետևանքով». «...Լեզուներն առաջացել են ո՛չ կամայականորեն և ո՛չ էլ ըստ պայմանագրի, այլ դուրս են եկել մարդկային բնության գաղտնարաններից և (կարելի է ավելացնել՝ որպես որոշակի անձի բնորոշ հարաբերականորեն անկախ էատարրեր) ինքնակարգավորվող և զարգացող ձայնային տարերքներ են»⁹:

Այլ հարց է, թե մենակ Ադամը՝ առաջին մարդը, կարո՞ղ է համարվել մարդկություն:

Ուրեմն՝ ըստ աստվածաշնչյան տեքստի՝ **մտածողությունը նախորդում է հասարակությանը**: Ստացվում է, որ լեզուն զուտ որպես հաղորդակցության միջոց և հասարակական երևույթ բնութագրելով՝ չենք կարող ընդգրկել նրա էությունն ամբողջովին: Եթե մինչևիսկ այն մարդուն տրվել էր Աստծու հետ «հասարակություն կազմելու» ու նրա հետ հաղորդակցվելու կամ գուցե Աստծուն (այլ կերպ՝ նաև ինքն իրեն) հասկանալու համար, ապա տվյալ պահին մարդկային հասարակության բացակայության աստվածաշնչյան տեքստային իրողությունը բացահայտում է, որ Ադամը մտածում էր իր մասին: **Ադամի իր մասին մտածելու արդյունքն է Եվան**, հետևաբար՝ **մարդկային հասարակությունը նաև մարդու իր մասին մտածելու արդյունքն է**: Մարդկային հասարակությունը չկար, սակայն Ադամն արդեն մտածում էր: Խորհրդանշական այս հաղորդումը ակնարկ է այն բանի, որ մարդը նախ մտածելով է մարդ դարձել, հետագայում նույնպես մարդը մարդու հետ շփվելիս մտածելով է շարունակել զարգանալ. եթե նա չմտածեր, որքան էլ շփվեր, միևնույն է, մարդ, այսինքն՝ բանական էակ, չէր դառնա և չէր զարգանա:

Գիտությունն իրավացիորեն մտածողությունը կապում է լեզվին ու խոսքին:

Լեզվի սահմանումները բազմաբովանդակ են: Իհարկե, լեզուն մտածողության և հաղորդակցության միջոց է, և այս ակադեմիական ձևակերպմանը այլ հավելում կատարելն անչափ դժվար է: Մակայն հիշյալ բնութագրումն ավելի տարողունակ և ընդգրկուն կլիներ, եթե կարողանայինք պարզել հաղորդակցության նպատակը: Դժվար է պատասխանել այն հարցին, թե ինչու է մարդն ուզում հաղորդակցվել, ընդ որում՝ ոչ միայն իր նմանի հետ, այլև ընդհանրապես (օրինակ՝ կենդանիների): Նույնքան և դժվար է պատասխանել այն հարցին, թե ինչու «դիողենեյան ախտանիշով» որոշ մարդիկ ուզում են առանձնանալ, մեկուսանալ, չհաղորդակցվել: Հոգեկան այս իրողությունը ստիպում է մտածել, որ լեզվի՝ անվերապահորեն հասարակական երևույթ կոչվելու հանգամանքն ամենևին էլ չի սպառում նրա ամբողջական բնութագիրը:

Բայց ինչպե՞ս է կոնկրետ լեզվամտածողությունը դրսևորվում

⁹ Նույն տեղում, էջ 324:

կոնկրետ տեքստում, մասնավորապես՝ հայերեն լեզվամտածողությունն ինչպե՞ս է արտահայտվում հայերեն տեքստում:

Տեքստը, լինելով լեզվական իրողություն և լեզվաբանական քննության առարկա, կարող է դառնալ միջոց տվյալ լեզվի հենքի վրա տվյալ լեզվով խոսող ժողովրդի մշակութային արժեհամակարգի բացահայտման համար, այսինքն՝ լեզվական իրողությունը (տեքստը) և լեզվաբանական գիտելիքը կարելի է ծառայեցնել գրականագիտական, մշակութաբանական և այլ խնդիրների պարզաբանմանը (ճանաչողական լեզվաբանություն):

Օրինակ՝ տվյալ հայերեն տեքստը հայերենի լեզվամտածողական համակարգի տիրույթում քննելիս առաջ են գալիս այնպիսի հարցադրումներ և հարցեր, որոնց կարևորությունը ստեղծագործության մեկնաբանման համար գրականագիտությունը մինչև օրս չի կարողացել «զգալ» (օրինակ, ասենք, ինչո՞ւ են Մեծ Միերն ու Մեծ Մելիքը պայման կապում՝ իրենցից մեկի մահվան դեպքում մյուսը գնա մահացածի երկիրը և տեր կանգնի նրա կնոջը, ընտանիքին և այլն):

Գրականագիտությունը նման հարցադրումներ չի կատարել և չէր էլ կարող կատարել, քանի որ դրանք դուրս են նրա տեքստը քննելու ընդունված հին մեթոդական կաղապարներից: Գրականագիտությունը, ցավոք, սովորաբար և առավելապես տեքստը տեսնում է հորիզոնական պլանում՝ այլ տեքստերի կողքին: Մինչևիսկ երբ որևէ տեքստ համեմատվում է դրանից առաջ եղած տեքստերի հետ, համեմատությունը կատարվում է երկու տեքստերի ներքին **նույնատիպ** պարունակների զուգահեռներում՝ **կոնկրետ ժամանակի մեջ**: Այնինչ վաղուց եկել է ժամանակը տեքստը քննելու նախևառաջ տվյալ լեզվի վրա խարսխված **տարատիպ** երևույթների (գրականություն, պատմություն, հավատալիքներ, ժողովրդի լինելության խորհուրդներ, կրոն, սովորույթներ, կենցաղ և այլն) համայնապատկերում՝ նաև **կոնկրետ ժամանակից դուրս**: Այսինքն՝ որպեսզի հնարավոր լինի պարզել, թե ինչ լեզվամտածողական կառույց-երևույթ է տվյալ տեքստը, անհրաժեշտ է այն քննել վերժամանակային տիրույթում, այսինքն՝ տարբեր ժամանակներում տվյալ լեզվով ստեղծված և պահպանվող տեքստերի ամբողջության (համատեքստ) մեջ, որը տվյալ լեզվով ստեղծված մշակույթի արժեհամակարգային ատաղձն է և անքակտելի է տվյալ լեզվամտածողական համակարգից: Արժեհամակարգը և լեզվամտածողական կառույցը մշտապես ազդում են տվյալ լեզվով ստեղծվող տեքստի (բանահյուսական, բանասիրական, գրական, գրականագիտական, պատմագրական, պատմագիտական և այլն) վրա՝ պայմանավորելով այդ տեքստի յուրահատկությունները: Լեզվի կառուցվածքային «ամրանները» պահում են տեքստը այդ լեզվով խոսող հանրության արժեհամակարգային պարունակներով, իսկ վերջիններս հետադարձ ուժով ազդում են լեզվի, դրա բառապաշարի և մինչևիսկ կառուցվածքի վրա:

Բանալի բառեր – լեզվամտածողություն, արժեքամակարդ, տեքստ, խոսել, մտածել

ТАДЕВОС ТОНОЯН – *Взаимоотношения в тексте языка и мышления.* – Наблюдаемая в XX веке тенденция сопоставлять языкознание и литературоведение постепенно углубляется благодаря тому, что в качестве языковой реальности изучаются главным образом различные стороны текстовых форм языка и содержания – структурная, культурологическая, лингвистическая, философская.

Языковедческое исследование литературного текста позволяет постепенно подойти к постановке и решению литературоведческих и культурологических вопросов, поскольку мысли (содержательная сторона), развиваемые в литературном произведении, всегда ищут соответственного языкового воплощения (формальная сторона).

Литературоведение обычно рассматривает текст горизонтально, рядом с другими текстами; сопоставление совершается через параллели однотипных явлений внутри двух текстов и в конкретном времени. Анализируя же текст вне конкретного времени, исходя из однородных явлений, основанных на данном языке (литература, история, верования, религия, обычаи, быт), мы получаем возможность прояснить, что представляет собой данный текст с точки зрения языка и мышления.

Изучение структурных и содержательных сторон текста помогает выявить особенности мышления и системы ценностей говорящего на данном языке народа.

Ключевые слова: *языковое мышление, система ценностей, текст, речь, мышление*

ТАДЕВОС ТОНОЯН – *The Interrelation of Language and Thought in the Text.* – The tendency of comparing linguistics with literary criticism noticed especially in the XX century is gradually deepening due to the fact that, as linguistic reality, especially the form and content of the text in their various aspects, i.e. structural, cultural, linguistic, philosophical, etc. are studied.

From the linguistic study of the literary text literary-cultural problems can logically be deduced and solved, as the ideas raised in a literary work (content plane) are always in search of suitable language basis (form).

Literary criticism puts the text in the horizontal plane alongside other texts: the comparison is made in the parallels of two identical internal texts at a specific time. The text, first of all, anchored in the panorama of various phenomena (literature, history, beliefs, tips on the being of people, religion, customs, lifestyle, etc.) and also being analyzed out of specific time enables to find out what structure-phenomenon of language awareness the given text represents.

The study of the structure and content of the text could enable to reveal the peculiarities of thinking of the people speaking that language and the system of cultural values.

Key words: *language awareness, system of values, text, talk, think*